

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1**

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության**

13. 01. 2016թ.

**ք.Վանաձոր**

**Մասնակցում էին**

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Է. Մացակյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ն. Սարգսյանը, Ա. Աղլոյանը, Հ. Մկրտչյանը, Ա. Սահակյանը, Ս. Գրիգորյանը, Մ.Սարգսյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Հ. Անտոնյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության պետ

**Օր ա կ ա ր գ ու մ`**

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

**Առաջարկվեց մարզի համայնքների ղեկավարներին`**

1. Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել ազգաբնակչության շրջանում սուր վարակիչ հիվանդությունների առկայության դեպքում բժշկական կազմակերպություններին դիմելու և կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:
2. Համատիրություններ ունեցող համայնքների ղեկավարներին ուշադրությունը հրավիրել համայնքներում առկա և ժամանակավորապես չբնակեցված բնակարանների կարգավիճակը հստակեցնելու անհրաժեշտության մասին, որպեսզի հնարավորինս բացառվեն տեխնիկական և այլ տեսակի վթարները:
3. Տարեկան հաշվետվությունների ներկայացմանը հնարավորինս ապահովել համայնքի ազգաբնակչության, հասարակական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների մասնակցությունը և հրապարակայնությունը:
4. Համայնքների տարեկան բյուջեները կազմելու ժամանակ օգտագործել բոլոր հնարավոր միջոցները իրատեսական բյուջեներ կազմելու և ստանձնած պարտավորությունները կատարելու ուղղությամբ, հնարավորինս բացառելով սեփական եկամուտների պլանավորման չհիմնավորված նվազեցումները:

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`**

1. Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`
  - ա/ Մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով ներկայացնել մարզի զարգացման ՏԱՊ-ի մոնիտորինգի վերաբերյալ տեղեկատվություն:
  - բ/ Տարեկան հաշվետվությունները ներկայացնել` նշելով ինչպես ստորաբաժանումների կատարած աշխատանքները համեմատական վերլուծության միջոցով, այնպես էլ ներկայացնել բացթողումների և թերությունների վերացման նպատակով առաջարկություններ:
  - գ/ Մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ստորաբաժանումների աշխատակիցների արձակուրդների գրաֆիկը:
2. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել, որպեսզի մարզի առողջապահական հիմնարկները շուրջօրյա հերթապահություն իրականացնեն և արձագանքեն ցանկացած տեսակի սուր վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու բուժմանը:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել հանրակրթական դպրոցներում ուսումնական արձակուրդի ավարտից հետո ջեռուցման նորմալ ռեժիմի կազմակերպմանը:

ԼՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան  
Հեռ. 0322/4- 32- 99/